ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-1/2-5

ք. Երևան 25.05.2018 թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Կ. Սուքիասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից ավելի**:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից ավելի**,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կա՞) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3 885 636 (երեք միլյոն ութ հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչություն:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1660000446270100
ՀԿՀՀ 02522157	ՀԿՀՀ 00861057
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	ՏՆՕՐԵՆ
Կ. ԿԱՐԱՊԵՏ	Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

00709460

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-1/2-5 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ապրանքի անվանում	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Բնութագրող հիմնական հատկանիշները
1	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	GREEN	PrinterMayin	Չինաստան	HP LJ C4129X (№29X) / HP LJ 5100, ռեսուրսը 5000 էջ, Ա4 ֆորմատի թղթի համար: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
2	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	GREEN	PrinterMayin	Չինաստան	Samsung ML-1710 MLT-1710D3, ռեսուրսը 3000 էջ, Ա4 ֆորմատի թղթի համար: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
3	տառատեսակներով քարթրիջներ տպիչների համար (Քարթրիջ լազերային)	GREEN	PrinterMayin	Չինաստան	Հավաքածու HP CF 370AM՝ CB 541A կապույտ (1400 էջ), CB542A դեղին (1400 էջ), CB543A մանուշակագույն (1400 էջ), CB540A սև (2200 էջ): Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
4	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	GREEN	PrinterMayin	Չինաստան	HP LJ 505A ռեսուրսը 2300 էջ, Ա4 ֆորմատի, առնվազն 2 անգամ լիցքավորելու հնարավորություն: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
5	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	GREEN	PrinterMayin	Չինաստան	Քարթրիջների հավաքածու XEROX 6000-ի համար՝ 106R01631 երկնագույն (1000 էջ), 106R01632 կարմիր (1000 էջ), 106R01633 դեղին (1000 էջ), 106R01634 սև (2000 էջ): Մատակարարվի ստվարաթղթե տուփերով: Տուփի վրա առկա լինի արտադրողի հոլոգրաֆիկ ֆիրմային պիտակը: Անհրաժեշտ երաշխիքը հաշված մատակարարման օրից՝ առնվազն 365 օր: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
6	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	GREEN	PrinterMayin	Չինաստան	Քարթրիջների հավաքածու LJ PRO COLOR 400-ի համար՝ CE410A սև (2200 էջ), CE411A երկնագույն (2600 էջ), CE412A դեղին (2600 էջ), CE413A կարմիր (2600 էջ) Մատակարարվի ստվարաթղթե տուփերով: Տուփի վրա առկա լինի արտադրողի հոլոգրաֆիկ ֆիրմային պիտակը: Անհրաժեշտ երաշխիքը հաշված մատակարարման օրից՝ առնվազն 365 օր Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
7	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար (Տոներ)	HG TONER	Handan Hanguang OA Toner Co.,Ltd	Չինաստան	տոներ HG192 100գ. XEROX Phaser 3020 / WC 3025 տպիչի 106R03048 քարթրիջի համար, վակումային տարայով: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
8	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար (Տոներ)	HG TONER	Handan Hanguang OA Toner Co.,Ltd	Չինաստան	տոներ HG192 100գ. XEROX Phaser 3250 տպիչի 106R01374 քարթրիջի համար, գույնը սև, վակումային տարայով: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
9	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար (Տոներ)	HG TONER	Handan Hanguang OA Toner Co.,Ltd	Չինաստան	տոներ HG192 100գ. XEROX Phaser 3260 տպիչի 106R02778 քարթրիջի համար, գույնը սև, վակումային տարայով: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
10	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար (Տոներ)	NetProduct	«ՎSS-Դոն» ՍՊԸ	Չինաստան	տոներ NetProduct 80գ. RICOH SP220 SNW, գույնը սև, վակումային տարայով: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
11	Տոներային քարթրիջներ (Քարթրիջ)	GREEN	PrinterMayin	Չինաստան	HP CLJ 1025 գունավոր տպիչի քարտրիջների լրակազմ՝ CE310A black, CE311A cyan, CE312A yellow, CE313A magenta: Մատակարարվի

					ստվարաթղթե տուփերով: Պիտանելիության ժամկետը. առնվազն 1 տարի՝ մատակարարման օրից: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
12	Տոներային քարթրիջներ (Քարթրիջ)	GREEN	PrinterMayin	Չինաստան	HP CLJ 1515 գունավոր տպիչի քարտրիջների լրակազմ՝ CB540A black, CB541A cyan, CB542A yellow, CB543A magenta Մատակարարվի ստվարաթղթե տուփերով: Պիտանելիության ժամկետը. առնվազն 1 տարի՝ մատակարարման օրից: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
13	Տոներային քարթրիջներ (Քարթրիջ)	GREEN	PrinterMayin	Չինաստան	Xerox Phaser 6000 գունավոր տպիչի քարտրիջների լրակազմ՝ 106R01631 cyan, 106R01632 magenta, 106R01633 yellow, 106R01634 black: Մատակարարվի ստվարաթղթե տուպտերով: Պիտանելիության ժամկետը. առնվազն 1 տարի՝ մատակարարման օրից: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
14	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ (Քարթրիջ)	HP	HP	Սինգապուր	Քարտրիջներ HP T790 մակնիշի պլոտեր սարքի, 6 գույն՝ HP 72 (C9371A) cyan, HP 72 (C9372A) magenta, HP 72 (C49373A) yellow, HP 72 (C9374A) grey, HP 72 (C9403A) matte black, HP 72 (C9370A) photo black: Յուրաքանչյուրը՝ 130 մլ ծավալի: Մատակարարվի ստվարաթղթե տուփերով: Անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքների արտադրողի կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից օրիգինալության հավաստագիր (Certificate of Origin): Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ առնվազն 365 օր: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:
15	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ (Քարթրիջ)	HP	HP	Սինգապուր	Քարտրիջներ HP DJ 510 մակնիշի պլոտեր սարքի, 4 գույն՝ HP 82 (CH565A) black, HP 82 (C4911A) cyan, HP 82 (C4912A) agenta, HP 82 (C4913A) yellow Յուրաքանչյուրը՝ 69 մլ ծավալի: մատակարարվի ստվարաթղթե տուփերով: Անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքների արտադրողի կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից օրիգինալության հավաստագիր (Certificate of Origin): Պիտանելիության ժամկետը. առնվազն 1 տարի՝ մատակարարման օրից: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:

Ծանոթություն.
Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված, գործարանային փաթեթավորման տուփի մեջ:
Ապրանքները մատակարարվելու են վաճառողի կողմից ավան Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՊԵՏԻ ՊԺԿ

Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ

Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մեկ միավ գին /դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/	Ապրանքի մատակարարումը 2018թ.՝ ըստ եռամսյակների	
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ
1	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	հատ	2	12000	24000	1	1
2	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	հատ	10	3960	39600	5	5
3	տարատեսակներով քարթրիջներ տպիչների համար (Քարթրիջ լազերային)	լրակազմ	2	17640	35280	1	1
4	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	հատ	200	3000	600000	100	100
5	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	լրակազմ	6	7644	45864	3	3
6	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	լրակազմ	50	18816	940800	25	25
7	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար (Տոներ)	հատ	36	960	34560	18	18
8	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար (Տոներ)	հատ	20	960	19200	10	10
9	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար (Տոներ)	հատ	3	960	2880	2	1
10	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար (Տոներ)	հատ	100	726	72600	50	50
11	Տոներային քարթրիջներ (Քարթրիջ)	լրակազմ	5	11466	57330	2	3
12	Տոներային քարթրիջներ (Քարթրիջ)	լրակազմ	1	17850	17850	1	
13	Տոներային քարթրիջներ (Քարթրիջ)	լրակազմ	4	7644	30576	2	2
14	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ (Քարթրիջ)	լրակազմ	2	256368	512736	1	1
15	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ (Քարթրիջ)	լրակազմ	13	111720	1452360	6	7

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ

Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-1/2-5 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV՝ Կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. բայց ոչ ուշ քան 10.12.18թ.							
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր,
1	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	30121460/8/10/2	12000	12000	24000	24000	24000	24000	24000	24000
2	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	30121460/13/10/2	19800	19800	39600	39600	39600	39600	39600	39600
3	տառատեսակներով քարթրիջներ տպիչների համար (Քարթրիջ լազերային)	30237310/4/10/4	17640	17640	35280	35280	35280	35280	35280	35280
4	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	30121460/17/10/2	300000	300000	600000	600000	600000	600000	600000	600000
5	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	30121460/21/10/4	22932	22932	45864	45864	45864	45864	45864	45864
6	տոներային քարտրիջներ (Քարթրիջ լազերային)	30121460/22/10/4	470400	470400	940800	940800	940800	940800	940800	940800
7	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար (Տոներ)	30121470/6/10/2	17280	17280	34560	34560	34560	34560	34560	34560
8	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար (Տոներ)	30121470/7/10/2	9600	9600	19200	19200	19200	19200	19200	19200
9	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար (Տոներ)	30121470/8/10/2	1800	1800	2880	2880	2880	2880	2880	2880
10	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար (Տոներ)	30121470/16/10/2	36300	36300	72600	72600	72600	72600	72600	72600
11	Տոներային քարթրիջներ (Քարթրիջ)	30121460/26/10/4	25000	25000	57330	57330	57330	57330	57330	57330
12	Տոներային քարթրիջներ (Քարթրիջ)	30121460/27/10/4	17850	17850	17850	17850	17850	17850	17850	17850
13	Տոներային քարթրիջներ (Քարթրիջ)	30121460/28/10/4	15288	15288	30576	30576	30576	30576	30576	30576
14	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ (Քարթրիջ)	42991160/2/10/4	256368	256368	512736	512736	512736	512736	512736	512736
15	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ (Քարթրիջ)	42991160/3/10/4	700000	700000	1452360	1452360	1452360	1452360	1452360	1452360

ՊՎՈՒՄ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ

Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-1/2-5 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի ենթման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «___ _____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N __ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /կամ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-1/2-5 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն